Մարինե Հարությունյան

ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՏԻՊԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ XVII Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XVIII Դ. ՍԿԶԲԻՆ

Բանալի բառեր **-** հազարաշեն կամ սողոմաքաշ, ապարանք, սղնախ, ամրոց, շրջան, տոհմ, դահլիճ, շքամուտք, ճարտարապետություն, մելիք:

Հայկական ճարտարապետական շինությունների շարքում գեղագիտական բարձր ճաշակով առանձնանում են բնակելի տները, որոնք աչքի են ընկնում նաև իրենց ոճական ձևերով: Ուստի հույժ կարևոր է տալ ընդհանուր պատկերացում սույն ժամանակաշրջանի Արցախի բնակելի տների հորինվածքային տիպերի, ճարտարապետական առանձնահատկությունների վերաբերյալ, որոնք գիտական հետազոտության շրջանում շատ քիչ են ուսումնասիրվել:

Պատմաշրջանի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ ձեռքի տակ եղած պատմական նյութերի հիման վրա ցույց տրվի, որ չնայած 1639 թ. Կասր ի Շիրինի (Կասրե-Շիրին) պայմանագրի կնքումից հետո Արցախը Արևելյան Հայաստանի մյուս շրջանների հետ հայտնվելով Սեֆյան Պարսկաստանի տիրապետության տակ և կրելով օտարի ծանր լուծը, շարունակել է ոչ միայն հնարավորինս պահպանել դարեր ի վեր ստեղծված մշակութային ժառանգությունը, այլև ստեղծել նորերը, որոնց թվում եղել են բնակելի տները:

XVII-XVIII դդ. ճարտարապետական ինքնատիպ հորինվածքներով առանձնանում են բնակելի տները, որոնք աչքի են ընկնում իրենց գեղագիտական բարձր ճաշակով: Օրինակ, Հայաստանի լեռնային հատվածի ժողովրդական բնակարանի հիմնական տիպը գլխատունն է, ուղղանկյուն շինություն՝ ծածկված «հազարաշեն» կամ «սողոմաքաշ» համակարգի փայտե գմբեթով, կենտրոնում՝ լուսանցույց երդիկ: Ծածկը հենվում էր չորս առանձին կամ պատին կից սյուների վրա...[1]: Նման շինություններն առավել հանգամանալից ներկայացնում է Ն. Պապուխյանը[2]: Այս բնակարանների տիպին պատկանում է Ծարում (Վերին Խաչեն, ներկայումս՝ Արցախի Հանրապետության Քարվաճառի շրջանում) 1658 թ. ոմն Ավանեսի կառուցած հազարաշեն տունը, որի չորս սյունները սովորական գերանների փոխարեն քարից են[3]: Գյուղում այս քարասյուն տունը հայտնի է «Դաշ դիրայլ դամ» անունով, և այնտեղ ապրում էր Մեհտին Իսմայել Մուսա օղլու ընտանիքը[4]:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում բնակարանի մեկ այլ տարբերակ են համարվում պալատական ամրոցները կամ մելիքական ապարանքները (ամարաթները), որոնց շինարարությունը՝ շնորհիվ XVI-XVIII դդ. Արցախում մելիքական կարգի հաստատման ու ամրապնդման և դրանց հետագա ճյուղավորման, լայն թափ ստացավ: Պատմաճարտարապետական տեսանկյունից ապարանքները դրսևորվում են երկու ոճով՝ բնակավայրերի և ամրոցների: Վերջիններս իրենց ճարտարապետական, կառուցողական ոճով նմանվում են Սյունիքի մելիքական ապարանքներին՝ Մելիք-Սաֆրազյանների՝ Անգեղակոթում (17-18-րդ դդ.), Մելիք – Թանգյանների՝ Բռնակոթում (18-րդ դ. երկրորդ կես), Մելիք-Փարսադանյանների՝ Հալիձորում, Մելիք-Փարամազյանների՝ Խնձորեսկում (18-րդ դ.)[5]:

---

[1] Տե՛ս «Հայոց Պատմություն», հ. III, գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես-XIX դարի վերջ), Ե., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2010, էջ 132:

[2] Մանրամասն Տե՛ս Պապուխյան Ն., «Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը», Ե., 1972:

[3] Տե՛ս Կարապետյան Ս., «Հայ մակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում», Ե., 1999, էջ 65:

[4] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ. 5 (Արցախ), Ե., 1982, էջ 217:

[5] Տե՛ս Ղուլյան Ա., «Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները», Ե., 2001, էջ 12:

Հարկ է նշել, որ մելիքանիստ բնակավայրերի ամենակարևոր նախապայմանը պաշտպանվածությունն էր: Հենց այս նկատառումով է, որ դրանք կառուցվել են կա՛մ ամրոցների մերձակայքում, կա՛մ թիկունքում ունեցել են բնական պատսպարաններ ու թաքստոցներ:

Ինչպես նշում է Վ. Հարությունյանը, ծագումնաբանական կապ ունենալով հայկական ժողովրդական բնակելի տան ավանդական տիպի՝ գլխատան հետ, միաժամանակ մելիքական տների ճարտարապետությունն աչքի է ընկնում հատակագծային լուծման որոշակի կանոնավորությամբ, պաշտպանական կառուցվածքներով, ոչ մեծ բերդի նկարագրով[1]:

Ավելի տարածված էին երկու գլխատներով ու տարաբնույթ, մեծաքանակ սենյակներով ապարանքները՝ բակի կողմից կամարասրահի առկայությամբ, ընդ որում բակը շրջապատված էր բարձր ու բուրգավոր պարսպապատերով (Թալիշ, Մոխրաթաղ, Մաղավուզ, Տող, Չանախչի և այլն), իսկ որոշներն ունեցել են երկհարկանի մասեր (Թալիշ, Մոխրաթաղ, Մաղավուզ, Խնածախ, Ավետարանոց)[2]: Բոլոր տիպի մելիքական տներում ձգված ուղղանկյուն հատակագծով սենյակները կառուցված են ժողովրդական բնակարաններում լայնորեն տարածված այսպես կոչված գոմի-օդաների օրինակով. որոնց մեծ մասամբ ունեն խորքային տեղադրիք, ճակատային մուտք, ետնապատում խորշերի մեջ առնված բուխարի՝ երկայնական, բարձրացված, ծածկաձև և այլն: Այս տեսակետից ուշագրավ են Վարանդայի Մելիք-Շահնազարյանների, Զրաբերդի Մելիք-Իսրայելյանների,Գյուլիստանի Մելիք-Բեգլարյանների[3] (XVII-XVIII դդ.) ապարանքները[4]: Երկհարկանի շինությունների թվին է դասվում Ավետարանոցում կառուցված Մելիք-Շահնազարյանների տոհմաճյուղից սերված Մելիք Բաղի Ա-ի ապարանքը (XVII)[5]: Վերջինիս հետաքրքիր նկարագրությունը տալիս է Մ. Բարխուտարեանցը. «Մելիք Բաղու ապարանն, որ մօտ է Կուսանաց անապատին, բաղկացած է երկու յարկից. գետնայարկում կայ երեք արցախական, քարուկիր տուն, որք մնում են ցարդ նոյնութեամբ: Իսկ վերնայարկը քանդել տուած է ռազմագէտ գեներալ Առուստամ[6] Գիւգիեան Մատաթեանցն եւ շինած իւր համար բնակարան. որ աւերակ է այժմ» [7]: Այս ոճի ճարտարապետական կառույցներից են Ավետարանոցի Մելիք-Հուսեյն Ա-ի և Մելիք-Բաղի Բ-ի ապարանքները (XVII-XVIII դդ.) [8]:

Մելիք-Իսրայելյանների ապարանքը[9] ամրոցատիպ է: Ունենալով նպաստավոր բնական պայմաններ՝ այն վաղ միջնադարից ի վեր կառուցվել և դարձել է երկրամասի անառիկ ու նշանակալի պաշտպանական հենակետերից մեկը: 17-րդ դ. սկզբից գավառի մելիքներն իրենց առաջին նստավայրն են դարձրել Զրաբերդ ամրոցը՝ նրա բարձունքին պահպանված հնավանդ ավերակները վերակառուցելով և վերածելով ամրացված բնակարանի: Ապարանքը բաղկացած է բազմաթիվ բնակելի սենյակներից: Միջնաբերդ-ամրոցը ուներ բրգավոր պարիսպներ, որոնց ավերակները պահպանվել են:

Մելիք-Իսրայելյանների ապարանքի անառիկությունը յուրովի նկարագրում է Մ. Բարխուտարեանցը. «Շինութիւնն ունի արտաքուստ բերդի ձև, քարուկիր բարձր պարիսպ եւ մի դարբաս արևելեան կողմից: Արտաքուստ չափերով ունի 49 մետր երկարութիւն, 29 մետր 25 սանթիմ լայնութիւն: Ամբողջ ապարանն բաղկացած է տասներկու

---

[1] Տե՛ս Հարությունյան Վ., «Հայ ճարտարապետության պատմություն», Ե., 1992, էջ 438:
[2] Տե՛ս Նույն տեղում:
[3] Տե՛ս Լալայան Ե., Հայ մելիքութիւններ, «Ազգագրական հանդես», գիրք Ե, Թիֆլիս, 1899, № 1, էջ 219:
[4] Մանրամասն Տե՛ս Ղուլյան Ա., նշվ. աշխ., էջ 36-48:
[5] Տե՛ս Ղուլյան Ա., նշվ. աշխ., էջ 90:
[6] Բարխուտարյանցը նշում է, որ Առստամ անունը եղել է Կնեազ-Մադաթովի անունը, իսկ նրա հոր անունը՝ Գրիգոր: Տե՛ս Բարխուտարեանց Մ., Արցախ, Բաքու,1895, էջ 96-97:
[7] Բարխուտարեանց Մ., Արցախ, էջ 97:
[8] Մանրամասն Տե՛ս Ղուլյան Ա., նշվ. աշխ., էջ 91:
[9] Գտնվում է ներկայի Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանում, Թարթառ գետի և նրա Թրղի վտակի ձախ ափին: Պատմական տարբեր աղբյուրներում նշվում է Չարաբերդ, Ճառաբերդ, Ձերմուկի բերդ և Զրաբերդ անուններով: Տե՛ս Ղուլյան Ա., նշվ. աշխ., էջ 82:

սենեակից, որք ունին զանազան ձև ննջարան, ընդունարան, դատարան, թոնրատուն, խոհանոց, սպասաւորանոց, գոմանոց....»[1]:

Մելիք-Բեգլարյանների ապարանքներից մեկը (Հոռեկա կամ Գլխո վանքի մոտ) շրջափակված է բրգավոր պարիսպներով, որը վերագրվում է Մելիք-Բեգլար Ա-ի որդիներին՝ Աբով Բ-ին և Մելիք-Թամրազին: Այս մասին հետաքրքիր նկարագրություն է տալիս Ռաֆֆին. «Պալատը շինուած է ամբողջապէս սպիտակ քարերից: ... Հոռեկի բլուրի ստորոտում գտնվում է բուն պալատը, ամբողջութիւնը քառակուսի ձև ունի. շրջապատի չորս անկիւնները ամրացրած են չորս աշտարակներով: Գլխավոր դռնից ներս մտնելով բակը, դէպի աջ կողմը բոլորովին ողջ կանգնած են մի կարգ ընդարձակ սենեակներ. նրանց թիւը ութն է: Սենեակների առաստաղը կամարակապ է եւ գմբէթաձեւ. գմբէթի գագաթից բոլորաձեւ երդիկ է բացուած, որտեղից լոյս է թափւում... » [2]: Ռաֆֆին, շարունակելով ապարանքի ճարտարապետական մանրակրկիտ նկարագրությունը, այն նմանեցնում է սյունեցիների պալատներին: Մեծ գրողը նշում է. «Սենեակների ձևը սիւնեցու տան կատարելագործուած ձևն է...»[3]: Ռաֆֆին մեծ ոգևորությամբ նկարագրում է պալատի դիմացի կառույցը. «Այդ պալատի հանդեպ, ճանապարհի միւս կողմում, կայ մի այլ առանձին շինուածք, որը իւր ընդարձակութեամբ աւելի մեծ է, քան առաջինը: Որպէս երևում է դա ծառայելիս է եղել յիշեալ պալատում բնակուող իշխանի ծառաների, հիւրերի եւ պահապանների բնակութեան համար: Այստեղ կայ ախոռատուն, ստորերկրեայ ներքնատներ, որոնք բանտի համար են եղել եւ այլ զանազան ծածկոցներ.... »[4]: Նա նշում է նաև, որ մի դահլիճի դռան կամարի վրա փորագրվել է հետևյալ արձանագրությունը. «Յիշատակ է Ոհան բարուն (իշխան) տէրին Մէլիք Թամրազ: ՌՃՀԶ: »[5]: Հաշվի առնելով Արցախի վերոնշյալ մելիքական ապարանքի և Սյունիքի Մելիք – Թանգյանների, Մելիք-Փարսադանյաններ, Մելիք-Փարամազյանների և ուրիշ մելիքական տների ապարանքների ճարատարապետական նման-օրինակ հորինվածքները, համամիտ ենք մեծն գրողի տեսակետի հետ:

Այս մասին մեկ այլ աղբյուրում նշվում է, որ սենյակները կառուցված են մաքուր, սրբատաշ քարերով, ներսից և դրսից թաղածածկ են, պատերի մեջ ունեն բազմաթիվ պատուհաններ և դարակներ, որոնցից մեկի մուտքի ճակատին գրված է եղել. «Յիշատակ է Ոհան Բարուն. տերեն Մելիք Թամրազ[6]: ՌՃԾ: (1701)»[7]: Իսկ Ա. Ղուլյանի «Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները» աշխատությունում նշվում է 1727 թ. (հեղինակը հիմնվել է Ռաֆֆու և Ե. Լալայանի վկայությունների վրա), և, որ կառուցած ապարանքը Մելիք-Թամրազը[8] թողնում է պարոն տեր Օհանին[9] (Հոռեկա վանքի վանահայրն էր, ազգային-ազատագրական պայքարի ոգեշունչ մասնակիցը):

Հարկ է նշել, որ ապարանքն ունեցել է պաշտպանական նշանակություն՝ որպես ամրացված հենակետ ու զորակայան-սղնախ՝ հսկելով մելիքության արևելյան տափաստանամերձ սահմանները՝ միաժամանակ վտանգի պահերին ապահով ապաստան դառնալով գյուղի և շրջակայքի բնակչության համար:

Բերդաձև-ամրոցակերպ ձևերի թվին է պատկանում Քաղաքատեղի (նաև՝ Մայրաքաղաք[10]) ապարանքը, որը կառուցվել է XVII դ. մելիքական տուն-դղյակի մնացորդ-

---

[1] Տե՛ս Բարխուտարեանց Մ., Արցախ, Ե.,1996, էջ 140:
[2] Ռաֆֆի, Երկու ամիս Աղուանից եւ Սիւնեաց աշխարհներում, «Լումա», Թիֆլիս, 1896, № 2, էջ 206:
[3] Նույն տեղում:
[4] Ռաֆֆի, Երկու ամիս Աղուանից եւ Սիւնեաց աշխարհներում, «Լումա», Թիֆլիս, 1896, № 2, էջ, 207:
[5] Նույն տեղում:
[6]Մելիք Թամրազի մասին Տե՛ս Լալայան Ե., Հայ մելիքութիւններ, «Ազգագրական հանդես», գիրք Ե, Թիֆլիս, 1899, № 1, էջ 222:
[7] «Դիվան հայ վիմագրության», պրակ. 5 (Արցախ), էջ 101:
[8] Մելիք-Թամրազը, որպես Գյուլիստանի մելիք և արցախյան սղնախների հայ զինվորության նշանավոր հրամանատար, հանդես է գալիս ազգային-ազատագրական պայքարի ամենանշանավոր դեմքերի՝ Եսայի կաթողիկոսի, Մելիք -Եգանի, Աբրահամ Սպարապետի, Ավան յուզբաշու և այլոց հետ: Տե՛ս Ղուլյան Ա., նշվ. աշխ., էջ 52:
[9] Նույն տեղում, էջ 50:
[10]Ներկայիս Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Մաղավուզ գյուղից մոտ 2 կմ արևմուտք, Թարթառ գետի աջ ափին, նշանավոր Ձրաբերդ ամրոցից 1,5 կմ դեպի արևելք: Ներկայացվում է որպես Ձրաբերդի մելիքանիստ բնակավայրերից մեկը: Մանրամասն Տե՛ս Ղուլյան Ա., Աբգարյան Ռ., Արցախի Քաղաքատեղ բերդավանը, «ՊԲՀ», Ե., 1988, № 1, էջ 147-162:

ների վրա, իսկ XVIII դ. 20-ական թվականներին՝ վերակառուցվել[1]: XVIII դ. երկրորդ կեսից ապարանքը Մելիք Ադամի նստավայր-դղյակներից մեկն էր: Ապարանքը կառուցված է ժայռոտ լանջերով ձորակի լայնքով դրված ու կիսակլոր բուրգեր ունեցող բարձր (մոտ 4-8 մ) հենապատնեշով ստեղծված արհեստական դարավանդի վրա: Նախամուտքերն ու բոլոր սենյակներն եղել են փայտածածկ: Պատերը հագեցած են համաչափ դասավորված ու լայն որմնախորշերով, պատուհանները եղել են լայն ձևերով: Սենյակների առաստաղները ներքուստ շեշտելու և լանջավոր տանիքներ ստանալու նպատակով ծածկվել են ոչ թե ավելի հեշտությամբ դրվող երկայնական[2]:

Երկհարկանի ապարանքների թվին է դասվում Մելիք Եգանի ապարանքը (կառուցվել է 1737 թ.), որը գտնվում է Տող գյուղի կենտրոնում: Այն ունեցել է բրգավոր շրջապարիսպ, որը մասամբ պահպանված է դարպասի հետ միասին: Կառուցված է սրբատաշ քարով, ներքին հարկը քարածածկ է: Ապարանքի ամենաուշագրավ կառույցը Մելիք Եգանի ընդունարանն է, որը քառանկյուն հատակագծով և թաղակապ ծածկով դահլիճ է: Ընդունարանի երկրորդ հարկի շքամուտքի ամբողջ ճակատով մեկ փորագրվել էր Մելիք Եգանի երկար արձանագրությունը, որում նշվում է կառույցի մասին[3]:

Այս շինության մասին հետաքրիքիր հիշատակություն ունի Մ. Սարգսյանը. «Մուտքը, որ իրականացված է սրբատաշ քարերով շարված ազդեցիկ կամարակապ շքամուտքի տեսքով, բացվում է սրահից և տեղադրված է պատի կենտրոնական մասում: Դիմացի պատի մեջ տեղադրված է մեծ բուխարի, որի երկու կողմերում բացված են ուղղանկյուն խորշեր: Սենյակը լուսավորվում է դեպի ներս լայնացող փոքր պատուհաններից թափանցող աղոտ լույսով.... »[4]: Վերին հարկն ունի պատշգամբներ: Հենվելով Ա. Ղուլյանի և Մ. Սարգսյանի ընդհանուր նկարագրությունների վրա՝ գտնում ենք, որ Տողի մելիքական ապարանքն իր պարիսպների անառիկությամբ պաշտպանական կառույց է հանդիսացել վերոնշյալ ժամանակաշրջանում և դասվել է Դիզակի ռազմավարական նշանակալից հենակետերի թվում:

Նմանօրինակ պատմաճարտարապետական կառույցներ են եղել նաև Արցախի այլ վայրերում: Ամրոցների դասակարգման օրինակներ են սղնախները: Պատմաճարտարապետական իրենց մեծ նշանակությամբ աչքի են ընկնում Զրաբերդի, Շիկաքար-Քարագլխի[5] (Խաչենի), Շոշի, Ավետարանոցի և այլ սղնախները, որոնք XVIII դ. 20-ական թվականներին հայ ազատագրական կռիվների ժամանակ կատարել են պաշտպանական հենակետերի դեր[6]:

Ընդհանրացնելով նշենք, որ մեր ուսումնասիրությունները հանգեցրել են այն եզրակացության, որ հայկական ժողովրդական բնակարանի ամենահին տիպի՝ գլխատան հորինվածքային ու կառուցվածքային սկզբունքների ազդեցությունը աշխարհիկ մոնումենտալ շենքերի ճարտարապետության վրա (նրա զարգացման տարբեր փուլերում) ունեցել է որակապես տարբեր դրսևորումներ՝ ի հայտ բերելով ժողովրդական ավանդույթների աստիճանական յուրացման և ստեղծագործական վերաիմաստավորման մի ուշագրավ պատկեր՝ սերտորեն կապված փայտանյութից քարանյութին անցնելու հետ: Բնակելի տիպերի ինքնատիպ դրսևորումներ էին մելիքական ապարանքները: Վերջիններիս մի մասը ներկայումս կիսավեր վիճակում են, հատկապես Արցախի հյուսիսային հատվածի, որոնք մյուս հայկական մշակութային արժեքների հետ գտնվում են Ադրբեջանի կողմից բռնազավթված սահմաններում:

---

[1] Ղուլյան Ա., նշվ. աշխ., էջ 75:
[2] Նույն տեղում, էջ 79:
[3] Նույն տեղում, էջ 30:
[4] Տե՛ս Սարգսյան Մ., Մելիքական բնակելի համակառույց Տող ավանում, «ՊԲՀ», Ե., 1987, № 3, 134-135:
[5] Մանրամասն Տե՛ս Սարգսյան Ս., Շիկաքար բերդը և շրջակայքի հուշարձանները, «Էջմիածին», 1993, № 7-8, էջ 78:
[6] 18-րդ դարի սկզբին Թուրքիայի և Պարսկաստանի միջև հակամարտությունը վերսկսվում է, իսկ 1724 թ. թուրքական զորքերը նորից ներխուժեցին Անդրկովկաս, այդ թվում՝ Արևելյան Հայաստան: Նման իրադրությունը առաջացրեց միջնադարյան մի քանի բերդերի ու ամրոցների վերակառուցման և նորերի ստեղծման անհրաժեշտություն: Պաշտպանական հենակետերի ստեղծման փայլուն օրինակներ են եղել Սյունիքում և Արցախում կառուցված սղնախները: Մանրամասն Տե՛ս Արզումանյան Զ., Մեծ և փոքր սղնախների հարցի շուրջ, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1985, № 4, էջ 85-92:

Марине Арутюнян, Типы жилых домов в Арцахе во второй половине XVII и в начале XVIII века,- Несмотря на трудный исторический период, многочисленные замечательные архитектурные сооружения были построены и восстановлены в Арцахе. Среди них были оригинальные жилые здания. Вместе с их архитектурными сооружениями были выделены дома, которые были построены в двух стилях: дворцы и замки, которые предназначались как защитные структуры. Среди значительных построек выделялись дворцы Мелик-Шахназаряна (Варанда, XVII-XVIII вв), Мелик-Исраеляна (Джраберд, XVII-XVIII вв) и Мелик-Бегларяна (Гулистан, XVII-XVIII вв).

Marine Harutyunyan, Types of residential houses in Artsakh in the second half of XVII century and at the beginning of XVIII century,- Despite the hard historical period, numerous remarkable architectural constructions were built and rebuilt in Artsakh. There were original residential houses. Together with their architectural structure were distinguished the houses, which were built in two styles: palaces and castles, which served as defensive structures. Palaces of Melik-Shahnazaryan of Varanda, Melik-Israelyan of Jraberd, Melik-Beglaryans of Gulistan (XVII-XVIII centuries) were among the considerable ones.